



ՊՐՈՖ. ԴՈԿՏ. Ա. ԱՐՐԱՆՆԱՅԱՆ

ՍԱՄՎԵԼ ԱՆԵՑՈՒ ՏՈՄԱՐԱԿԱՆ ԵՎ ՏԻԵԶԵՐԱԳԻՏԱԿԱՆ ԱՇԽԱՑՈՒԹՅՈՒՆԸ

1.



ամվել քահանա Անեցին մինչև այժմ մեզ հայտնի է միայն իր ժամանակագրությամբ, որի խորագիրն է «Հալաֆուլ»¹ ի գրոց պատմագրաց յաղագս գիտի ժամանակաց անցելոց մինչև ի ներկայս ծայրափառ արարելոց: Անեցու այս աշխատությունը հրատարակել է բանասեր Արշակ Տեր-Միքայելյանը էջմիածնում 1893 թվականին²: Անեցու բնագրի հրատարակությունից առաջ ֆրանսերեն է թարգմանել այն ակադ. Բրոսսեն³:

Անեցու գրչին պատկանող այլ աշխատություն հայագիտության մեջ, առ այժմ, հայտնի չէ, համեմատյալ դեպ, տպագիր գրականությունը դեռ չգիտե: Մեծանուն ակադ. Հ. Աճառյանի «Անձնանունների բառարան»-ը, որ բիրիժոգրաֆիկ վերջին խոսքն է, Անեցու մեզ հասած աշխատություններից հիշում է միայն նրա ժամանակագրությունը⁴:

Բանասերներից սակայն Ղ. Ալիշանը, հիմնվելով մեզ անծանոթ ինչ որ աղբյուրի վրա, ենթադրել է, որ Անեցին սովորելով Հովհաննես Սարկավազի դպրոցում, պիտի որ գրած լինի նաև տոմարական աշխատություններ. «Սամվել ժամանակագրություններն զատ,— գրում է նա Շնորհալուն նվիրված իր մի ուսումնասիրության մեջ,— տոմարական բաներ ալ գրած է, որոց լավ հմտացներ էր իր

ամենահմուտ վարդապետեն»⁵: Ալիշանի մի այլ հիշատակությունից երևում է, որ նա Անեցու տոմարական այդ աշխատություններից մեկի հետ ծանոթ է եղել. նա հայտնում է, որ Անեցու տոմարական մի գրվածքը շարադրված է հարց ու պատասխանի ձևով, ունի պարզ ոճ և նվիրված է Ստեփանոս Իմաստասերին⁶: Դժբախտաբար, Ալիշանը լռում է այն մասին, թե ի՞նչ աղբյուրից է իրեն ծանոթ այդ աշխատությունը, ի՞նչ կոնկրետ վերնագիր ունի այն և տոմարական ինչ խնդիրներ են շոշափված նրա մեջ:

Ալիշանի այս անորոշ և մանվածապատ տեղեկությունը մասամբ հնարավոր է լինում վերծանել Կարինյան ցուցակի հիման վրա: Կարինյան ցուցակի հեղինակը էջմիածնի № 2005 ձեռագրի բովանդակած նյութերի սիգնատուրայի մեջ հիշել է այսպիսի մի աշխատություն. «Մեկնութիւն տաճարի ի Սամուէլ ֆանաւայէ»⁷: Անվարժ աչքն անգամ կարող է նկատել, որ այստեղ ինչ որ աղավաղում կա: Սամվել քահանան ի՞նչպիսի կարող էր մեկնել տաճարը. մեկնել կարելի է որևէ աշխատություն և ո՛չ շենք: Դժվար չէ նկատել, որ այստեղ կատարված է սրբագրական պարզ աղճատում՝ «տոմարի» աղավաղվել է «տաճարի», ուստի և Կարինյան ցուցակում պիտի կարդալ «Մեկնութիւն տաճարի ի Սամուէլ ֆանաւայէ», այսինքն՝ տոմարի մեկնություն, որ կատարված է Սամվելի կողմից:

Հայկական ՍՍՌ Պետական մատենադարանի դիրեկցիայի հանձնարարությամբ, անցյալ տարի աշխատելով սովետական մեր մատեն-

1. Սամուէլի քահանայի Անեցու, Հալաֆուլից ի բրոց պատմագրաց յաղագս գիտի ժամանակաց անցելոց մինչև ի ներկայս, Վաղարշապատ, 1893 թ.:

2. Collection d'historiens arméniens, S. Pétersbourg, 1876, T. II, p. 340—383.

3. Հ. Աճառյան, Հայոց անձնանունների բառարան, հատոր IV, էջ 384—385.

4. Ղ. Ալիշան, Շնորհալի և պարագայ իւր, Վենիսի, 1873 թ., էջ 123.

5. Նույնը, էջ 122.

6. Մայր ցուցակ ձեռագրի մատենից գրադարանի Սրբոյ Աթոռոյն էջմիածնի, 1863 թ., Բիֆլիս, էջ 210.

նադարանի ձեռագրերի պարունակած տոմարական երկերի բերլիոգրաֆիայի վրա, հանդիպեցինք Անեցու տոմարական-տիեզերագիտական բովանդակությամբ մի աշխատության մի շարք ընդօրինակությունների, որոնք վերնագրված են՝ «Մեկնություն տոմարի, զոր առաւել է Սամուէլի քանաւայի ի խնդրոյ Ստեփանոսի Իմաստասիրի»։ Անվիճելի է, որ տոմարական-տիեզերագիտական այս տեքստը Անեցու հենց այն աշխատությունն է, որն առանց վերնագրի և աղբյուրի հիշել է Ղ. Ալիշանը։ Հավանական է Անեցու այս աշխատության ընդօրինակությունը կա՝ Վենետիկի Մխիթարյանների մատենադարանում, որի հետ և ծանոթ է եղել Ղ. Ալիշանը։ Սամվել քահանա Անեցու ահա այս աշխատությունն է, որ մենք ցանկանում ենք այժմ հրատարակության հանձնել։

2.

Նախքան հրատարակվող տեքստի քննության անցնելը, հակիրճ մի քանի խոսքով կանգ առնենք Սամվել Անեցու անձնավորության վրա։

Սամվել երեքը կամ Սամվել քահանան՝ բնիկ Անի քաղաքից է, որի համար և իր ծննդյան տեղանունով Անեցի մականունն է ստացել, մի բան, որ շատ սովորական է հայ մատենագրերի մոտ միջին դարերում։

Սամվել Անեցին ծնված պիտի լինի 12-րդ դարի առաջին տասնամյակում։ Այդ դժվար չէ կոահել հետևյալ փաստից. նա սովորել է Հովհաննես Սարկավազի դպրոցում, անձամբ նրա մոտ, իսկ Սարկավազը, հայտնի է, որ մահացել է 1129 թվին։ Եթե ընդունենք, որ Սամվելը Սարկավազի վերջին աշակերտներից էր, իսկ ավելի հաստատվող լինել, ինչպես հետո կտեսնենք, չէր կարող, ապա նա 1129 թվականին 15—20 տարեկան հասուն պատանի պիտի լիներ, որ կարելի լիներ նրան դպրոց ընդունել. ուրեմն՝ նա ծնված պիտի լինի 1105—1110 թվերին։

Որ իրոք, Սամվելը աշակերտել է Սարկավազին և նրա դպրոցում դաստիարակվել, այդ մասին մատենագրական մի քանի հիշատակություն ունենք։ Այսպես, Վարդան Արևելցին այդ մասին հետևյալն է գրում. «Եւ ի նմանէ (այսինքն) Յովհաննիսիս— Ա. Ա.) աշակերտեալն... Սամուէլ երէց աշխարհի, որ զգաւազանսն յօրինեաց քրոնիկոնին, Անեցին»⁸։ Պիտի նկատի ունենալ, որ Սարկավազին և նրա դպրոցը

7. Հայկական ՍՍՌ Պետական մատենադարան, ձեռագիր № 3070, Թ. 66ա (Վարդան Արևելցու տպագիր տեքստերը սխալաշատ հրատարակություններ լինելով, գերադասել ենք օգտվել ձեռագրերից)։

վազի Անիի դպրոցը, ինչպես պարզվել է վերջերս հրատարակված նոր աղբյուրներից, իր ժամանակի բարձրագույն դպրոցներից մեկն է հանդիսացել⁹։

Կիրակոս Գանձակեցու մի տեղեկությունից երևում է, որ Սամվելը Անիի կաթողիկոս եկեղեցու քահանան է եղել¹⁰։ Ուշագրության արժանի է, որ այս եկեղեցում, Սամվելից առաջ, քահանայագործել է նաև իր ուսուցիչը՝ Հովհաննես Սարկավազը¹¹։

Սամվել Անեցու ժամանակագրության մի տեղեկությունից իմանում ենք, որ 1161 թվին Անին սելջուկյան էմիրության լծից վրաց Գեորգի թագավորի օգնությամբ ազատագրվելու ժամանակ, մեր հեղինակը գտնվել է Անիում. «Ոժ. Յայս ամս,— գրում է Անեցին,— թագաւորն Վրաց Գեորգի էառ զԱնի յունիսի ԺԳ և ապա յաւոստոս ամաստոնն կոտորե(աց) զՇահարմենն, եւմն հազարաւ զութսուն հազարսն և այսորիկ ականատեսս եղաք մեք»¹²։

Սամվել Անեցին մահացած պիտի լինի 12-րդ դարի ութսունական թվերին։ Այդ դժվար չէ կոահել հեղինակի իր պատվիրատրվին՝ Գրիգորիս կաթողիկոսին ուղղած հետևյալ խոսքերից. «Արդ՝ ո՞վ սրբազգեաց Տէր իմ Գրիգոր, հարկեցայ ի թախանձելոյ ձեր զեղկիւն անձն իմ, ետու զանարհեստ ձեռն իմ ի մշակութիւն այս գործոյ, մոռանալով զբաշաղմունս կենցաղականիս որ յարածամ զզուէի գործել զառաքինութիւն։ Զանացի յոյժ և ի նեղ կեանս մարմնատրականիս»¹³։ Մարմնական նեղ կյանքի մասին արած իր այդ ակնարկը, անկասկած, ծերության է վերաբերվում, ուղղում է ասել, որ «օրերս համարված են», «գերեզմանիս առջև եմ կանգնած»։

3.

Անեցու տոմարական-տիեզերագիտական նշված աշխատությունը Հայկական ՍՍՌ

8. Տե՛ս այս մասին Գրեգին Ա. Կաթողիկոսի Հիշատակարանը ձեռագրաց, հատոր Ա., Անթիլիաս, 1951 թ., էջ 335—342։

9. Կիրակոս Գանձակեցի, Պատմութիւն հայոց, Թիֆլիս, 1909 թ., էջ 11։

10. Տե՛ս այս մասին Հայկական ՍՍՌ Պետական մատենադարանի № 666 ձեռագրի հիշատակարանը, Թ. 251ա։

11. Հայկական ՍՍՌ Պետական մատենադարան, ձեռագիր № 5619, Թ. 106բ (օգտվում ենք Անեցու կենդանության ժամանակ գրված ընդօրինակություն ձեռագրից)։

12. Նույնը, Թ. 53ա։

Պետական մատենադարանի ձեռագրերում մեզ հասել է մի շարք խմբագրություններով և ընդօրինակություններով: Ընդարձակ ընդօրինակությունները պահել են հետևյալ ձեռագրերը.

ա. № 7098, թ. 227ա—239բ, ընդօրինակել է Գրիգոր Ամթեցին 16-րդ դարում.

բ. № 6089, թ. 217բ—234բ, ընդօրինակված 1601 թվին, գրիչը հայտնի չէ.

գ. № 2018, թ. 97ա—107բ, ընդօրինակել է Սահակ գրիչը 1621 թվին Կոստանդնուպոլսում.

դ. № 7104, թ. 195բ—199ա (վերջը թերի), ընդօրինակել են Դուկաս և Հովհան գրիչները Դարաբադի Գետաթաղ գյուղում 1621 թվին.

ե. № 2005, թ. 41ա—43բ (վերջը թերի), ընդօրինակված Իլովում 1621 թվին, գրիչն անհայտ.

զ. № 739, թ. 261ա—267ա, ընդօրինակել է Սիմեոն կրոնավորը 1631 թվին.

է. № 8624, թ. 214ա—223բ, ընդօրինակել է Սարգիս Զուլայեցին 1657 թվին.

ը. № 3697, թ. 172ա—175բ, ընդօրինակել է Գրիգոր գրիչը 1658 թվին.

թ. № 8233, թ. 85ա—97ա, ընդօրինակել են Հովհաննես և Իսահակ գրիչները 1693—1695 թվերի ընթացքում.

ժ. № 8716, թ. 6ա, 10ա—20բ, ընդօրինակված է 19-րդ դարում:

Բացի նշված ձեռագրերից, Անեցու տոմարական աշխատության մեծ կամ փոքր հատվածները կան Հայկական ՍՍՌ- Պետական մատենադարանի հետևյալ ձեռագրերում.

1. № 2001, թ. 184բ—186ա, 1373 թվի ընդօրինակությամբ.

2. № 6907, թ. 66ա-բ, 15-րդ դարի ընդօրինակությամբ.

3. № 2292, թ. 225բ—229բ, 1624 թվի ընդօրինակությամբ.

4. № 2017, թ. 25ա—99ա, 1637 թվի ընդօրինակությամբ.

5. № 2002, թ. 1բ—2բ, 1698 թվի ընդօրինակությամբ:

6. № 1976, թ. 49ա-բ, 17-րդ դարի ընդօրինակությամբ.

7. № 2017, թ. 95ա—99ա, 17-րդ դարի ընդօրինակությամբ.

8. № 3411, թ. 163ա—164բ, 17-րդ դարի ընդօրինակությամբ.

9. № 1100, թ. 302ա—311բ, 1726 թվի ընդօրինակությամբ.

10. № 1974, թ. 49բ—51ա, 1760 թվի ընդօրինակությամբ.

11. № 4335, թ. 59ա-բ, 19-րդ դարի ընդօրինակությամբ:

Չնայած վերև բերված ընդօրինակություններից ամենից հինը № 2001 ձեռագրի ընդօրինակությունն է (1373 թ.), սակայն մեր համեմատական ուսումնասիրությունից պարզվեց, որ այդ ընդօրինակության տեքստը սխալաշատ է և զգալիորեն կրճատված: Սղաժ ընդօրինակություններից լավագույնը մենք համարում ենք № 2018 ձեռագրի ընդօրինակությունը, ուստի և այն դարձրինք մեր ներկա հրատարակության բնագիրը՝ իհարկե, անհրաժեշտ ուղղումները կատարելով այլ ձեռագրերից:

4.

Սամվել Անեցու ներկա աշխատությունը կոչվում է «Մեկնութիւն տումարի»: Այդ վերնագիրը, իրականում, չի համապատասխանում աշխատության բովանդակությանն ամբողջությամբ առած, որովհետև Անեցու ներկա աշխատությունը ո՛չ միայն տոմարական տեքստ է, այլև տիեզերագիտական: Ծիշտ է, այդ գիտությունները հարակից գիտություններ են և միջին դարերում նրանք սովորաբար միացվում են իրար, մասնավորաբար տոմարագետների մոտ, սակայն հայ տոմարագետները այդպես չեն վարվել — այդ գիտություններն առանձին սահմանադրված գիտություններ են ճանաչվել և այդպես էլ շարադրվել: Բայց այդպես չէ Անեցու մոտ:

Անեցու ներկա աշխատության մեջ տոմարական տեքստն առաջին մասն է կազմում և շարադրված է հարց ու պատասխանի ձևով: Նախ դրվում է հարցը, ապա պատասխանվում նրան: Անհավանական չէ, որ Ստեփանոս Իմաստասերը, որի պատվերով գրվել է այս աշխատությունը, ինքը նախապես Անեցուն տված լինի իր կազմած հարցացուցակը և խնդրած, որ նա պատասխանի դրանց, իսկ Անեցին, ըստ նրա հարցացուցակի, պատասխանած լինի նրան: Բացառված չէ, իհարկե և այն, որ Անեցին հենց ինքը ընտրած լինի շարադրման հարց ու պատասխանի այդ ձևը, մի բան, որ ընդունված էր միջին դարերում:

Անեցու տոմարի մեջ շոշափված հարցերը տոմարական սովորական պարզ հարցեր են, մեծ մասամբ օգտված Շիրակոնունց (այս մասին խոսք կլինի հետո): Աշխատությունն սկսում է տոմարի սահմանումից՝ «Զի՛նչ է տոմար», ապա անցնում տոմարական մասնավոր հարցերին՝ ի՛նչպես պիտի սահմանել տոմարը, ի՛նչ է «երեք ժամը», ի՛նչ է ամիսը, ի՛նչպես են առաջացել նրանց անունները, ի՛նչ է կրկնակը, կիսակը, թվականը, նահան-

ջը, Թժ.Ներեակը, վերադիրը, բազմապատիկը և տոմարական այլ հարցեր:

Տոմարի երկրորդ մասը նվիրված է հոռմեական տոմարի հաշվումներին: Այս մասում քննություն է առնված հոռմեական տոմարի մեջ գործածվող կրկնակը, կիսակը, երեք հարակաները, թվականը և տոմարական այն բոլոր խնդիրները, որոնք կարևոր են ոչ թե հոռմեական տոմարի համար որպես այդպիսին, այլ օգնում են ճիշտ հաշվելու և ճիշտ հասկանալու հայկական տոմարը:

5.

Տոմարական մասը, պետք է ասել, օրիգինալություն և գիտականություն քիչ ունի. այստեղ քննված հարցերը սովորական տոմարական պարզ հարցեր են: Այդ հարցերը, շատ ավելի մանրամասն և շատ ավելի գիտականորեն, Անեցուց ավելի առաջ, գրել է իր ուսուցիչը՝ Սարկավազը: Անեցուց ներկա աշխատության արժեքավոր մասը՝ նրա տիեզերագիտական մասն է, որի վրա և ուղում ենք փոքր ինչ կանգ առնել:

Անեցուց տիեզերագիտական այս մասը սկսում է տոմարական գրականության մեջ գործածված արաբական ինը բառերի հայերեն թարգմանությամբ:

Անուհետև, հեղինակն անցել է իր բուն նյութին՝ բնական մի շարք երևույթների պատճառների բացատրությանը: Սկսում է

Համեմատական հատվածներ Երակացուց և Անեցուց

«Զի՛նչ է տոմար. Տոմարն ժողով թարգմանի. և դարձեալ սկիզբն աստեղաբաշխութեան: Եւ զԲ.ուց լուսաւորաց զհանգամանս ընթացիցն: Զարեգակն վասն հասարակաւորութեան: Զի յետ այնորիկ շարշարանքն Փրկչին և յարութիւնն: Իսկ զլուսինն՝ զի ի լրման նորա կամաւոր շարշարանքն: Նա և զայլոց աստեղաց պատահմունս պարտ է արկանել ի նոյն իրողութիւնս ըստ ընթացից իւրեանց: Այլ զի մի՛ ամբոխ և անհաւասար իցեն աստեղացն, վասն ուսկացն շատացան երկու լուսաւորացն պատահմամբ ընթացից սահմանեալ զժամանակաւորն, զիտեղ զտիեզերական անսխալապէս»:

(Անանիա Երակացի, Տիեզերագիտություն և տոմար, էջ 74—75):

Այս մեթոդով Անեցին Երակացուց արտագրել է ամբողջ հատվածներ:

Տիեզերագիտական մասում Սամվել Անեցին օգտվել է Երակացուց «Յաղագս շրջ-

ծիածանից — ինչի՞ց է առաջանում նա: Մեր հեղինակն այս հարցին հետևյալ պատասխանն է տվել. խոնավ օդը դեմ հանդիման գտնվելով արեգակին և արեգակի լույսն ընդունելով ըստ նրա բոլորովյան, առաջանում է աղեղնաձև ծիածանը: Ծիածանը գույնը գույն է, որովհետև այնտեղ միավորվում են չորս տարբեր գույներ՝ հողից՝ սև գույնը, ջրից՝ սպիտակը, օդից՝ կապույտը, արեգի՝ դեղինը, իսկ նրանց խառնուրդից՝ ծիրանին և կարմրագույնը:

Սամվել Անեցին փորձել է, իր ժամանակի հասկացողության համաձայն, բացատրել լուսնի և արեգակի բակը, գիսավոր աստղը, աստղի թռիչքը, փայլակը, որոտը, շանթը, անձրևը, մառախուղը, ցողը և բազմաթիվ այլ երևույթներ, որոնց վրա մենք չենք ուղում ծանրանալ:

6.

Ի՛նչ աղբյուրներից է օգտվել Սամվել Անեցին իր ներկա աշխատության մեջ:

Անեցին տոմարական մասում, անվիճելի, օգտվել է Երակացուց «Տիեզերագիտություն և Տոմար» աշխատությունից: Ըստ որում, կարելի է ասել, որ ոչ թե օգտվել, այլ ուղղակի արտագրել է: Զուգահեռ բերված համեմատական փոքրիկ հատվածները կարող են որոշ պատկերացում տալ Սամվելի Երակացուց օգտվելու չափի մասին:

«Հարց. Զի՛նչ է տոմար:

Պատասխանի. Տոմար ասի ժողով, սկիզբն աստեղաբաշխութեան, և ի նոցանէն դատեալ զայս երկուց լուսաւորացս հանդամանս ընթացից՝ զարեգակն վասն հասարակաւորութեանն, զի յետ այնորիկ շարշարանքն և յարութիւն Փրկչին, իսկ զլուսինն՝ զի ի լրման նորա կամաւոր շարշարանքն: Նա և զայլոց աստեղաց պատահմունս պարտ է արկանել ի նոյն իրողութիւնս ըստ ընթացից իւրեանց: Այլ զի մի՛ ամբոխ և անհաւասար իցեն աստեղացն, վասն ուսկացն շատացան երկու լուսաւորացն պատահմամբ ընթացից սահմանել զժամանակաւորն՝ զիտեղ տիեզերական անսխալապէս»:

չաղայութեան երկնից» աշխատությունից, սակայն օգտվել է ոչ տառացի: Բերենք մի համեմատություն.

Համեմատական հատվածներ Ծիրակացուց և Անեցուց

«Յաղագս ձեան:— Զին լինի յորժամ ի հարաակողմն խոնարհի արեգակն և հիւսիսային ատն դարանայ և թանձրագոյնք ատքն ընդ միմեանս շփոթելով՝ թանձրանայ: Եւ ի բաց հոսեալ կտրատին մածուցեալ, ոչ կարացին դառնալ ի ջուր: Զի խստութիւն հողմոյ ոչ տայ լուծանել ի նաարութիւն ջրոց. և յորժամ սաստկապէս թափի ի վար՝ տաղտաբափ կոչի և մինչ սեղմապէս՝ ձին կոչի»:

(Ծիրակացու մատենագրութիւնը, էջ 320):

Ինչպես տեսնում ենք բերված օրինակից, Սամվել Անեցին Ծիրակացուց օգտվել է ընդհանուր ձևով, հավանական է նույնիսկ՝ միջնորդաբար, գուցե և իր ուսուցիչ Սարկավազի միջոցով:

Սարկավազի տիեզերագիտական աշխատություններից մեկ հասել է մի հետաքրքիր հատված, որը հրատարակել է մեծանուն հայագետ պրոֆ. Մեխիսեթ-բեկը ՍՍՄՄ Գիտությունների ակադեմիայի հայկական ֆիլիալի տեղեկագրի 1943 թվի № 1-ում (էջ 73—80): Այդ աշխատությունը վերնագրված է «Հովհաննես Սարկավազ վարդապետ Հաղբատցու «Վասն շարժման և սասանութեան երկրի» Սարկավազն այնտեղ խոսում է երկրաշարժի մասին: Անեցին ևս իր աշխատության մեջ ամփոփ ձևով կրկնում է իր ուսուցչի բացատրությունը երկրաշարժի առաջացման պատճառի մասին: Նրա կարծիքով, այդ բոլորի պատճառը անդնդարին քամիներն են, նրանք են առաջացնում «գետնաշարժ»ը: Անդնդարին հողմերը ցանկանալով դուրս գալ գետնից, հանդիպում են կարծր հողի դիմադրությանը, ուժեղ հարվածներով փորձում են պատռել, դուրս գալ գետնի տակից, որի հետևանքով առաջանում է երկրաշարժը:

7.

Ի՞նչ արժեք ունի Սամվել Անեցու ներկա աշխատությունը գիտության համար: Ինչո՞ւ անհրաժեշտ համարեցինք այս տեքստը հրատարակել:

Անեցու այս աշխատությունն, ամենից առաջ, արժեքավոր է գիտության պատմության համար. մինչև այժմ հայ մատենագրության մեջ տիեզերագիտական բովանդակություն ունեցող երեք աշխատություններ են հայտնի՝

Զի՞նչ է ձին:— Զինն ծնանի ջերմացեալ ամպս ի մեջ երկուց ներհակ հողմոց և գործեալ լինի ի փոքրաքանակ և սպիտակագոյն և սառուցեալ և ներհակ հողմոյն հանգամանացն ընդ փոխիլն ի ջրոց. վասն այն մասունքն նորա ոչ խտանան, այլ անգայտացեալ ի վայր բերի և կոչի ձին»:

ա) 7-րդ դարի մաթեմատիկոս Անանիա Ծիրակունու «Առ խոստացեալսն» և «Յաղագս շրջագայութեան երկնից», բ) XIV դարի տիեզերագետ Հովհաննես Նրզնկացու «Յաղագս երկնային շարժման», և գ) Հովհաննես Սարկավազի «Վասն շարժման և սասանութեան երկրի»:

Սամվել Անեցու ներկա աշխատության հրատարակությամբ գիտական գրականությունը հարստանում է հայկական մի նոր աղբյուրով: Անեցու տիեզերագիտական բացատրությունները գիտության համար, իհարկե, նոր ինչ որ Ամերիկաներ բաց չեն անում, նրանք իր ժամանակի գիտության մեջ իշխող տեսակետներն են, բայց մեկ համար կարևոր են այն տեսակետից, որ մենք նախ ծանոթանում ենք Անեցու ժամանակում բնական երևույթների մասին գոյություն ունեցող տեսակետների հետ և ապա՝ կրկին անդամ համոզվում՝ որ Անեցու ժամանակի հայ մտավոր կյանքում մարդիկ բնական երևույթները ինչ որ պասիվ, կուրորեն ընդունողներ չէին, այլ որ նրանք փորձում էին խորամուկ լինել երևույթների ներսը, փորձում էին բացատրել նրանք և իրենց համեստ լուծան մուծել գիտության գանձարանում:

Անեցու ներկա աշխատությունն արժեքավոր է նաև հայ մատենագրության պատմության համար: Սամվել Անեցուն մինչև այժմ մենք համարել ենք միայն ժամանակագիր: Ներկա աշխատությունը մեկ հնարավորություն է տալիս արվելի բաղմակողմանի մոտենալ Անեցու գրական ժառանգությանը. պարզվում է, որ հանձինս Սամվել Անեցու մենք ունենք ո՛չ միայն զարգացած մի հայ ժամանակագիր, այլև փորձված տոմարագետ և աստղաբաշխ:

97ա // ՄԵԿՆՈՒԹԻՒՆ ՏՈՒՄԱՐԻ, ԶՈՐ ԱՐԱՐԵԱԼ Է ՍԱՄՈՒԷԼԻ ՔԱՇԱՆԱՅԻ
Ի ԽՆԴՐՈՅ ՍՏԵՓԱՆՈՍԻ ԻՄԱՍՏԱՍԻՐԻ

ՀԱՐՑ.— Զի՞նչ է տոմար:

ՊԱՏԱՍԽԱՆ.— Տոմար ասի ժողով, սկիզբն աստեղաբաշխութեան, և ի նոցանէն զատեալ զայս երկուց լուսաւորացս հանդամանս ընթացից՝ զարեգակն վասն հասարակաւորութեանն, զի յետ այնորիկ շարշարանքն և յարութիւն Փրկչին, իսկ զլուսինն՝ զի ի լրման նորա կամաւոր շարշարանքն: Նա և զայլոց աստեղաց պատահմունս պարտ է արկանել ի նոյն իրողութիւնս ըստ ընթացից իւրեանց: Այլ զի մի՛ ամբոխ և անհաւասար իցեն աստեղացն, վասն ռամկացն տկարաց շատացան երկու լուսաւորացն պատահմամբ ընթացից սահմանել զժամանակ աւուրն՝ զիտել տիեզերականն անսխալապէս: Իսկ զարձեալ տոմար ասի ժողով, կամ վասն հասանելոյ աստեղաբաշխութեան, կամ զտիեզերս ժողովելոյ յայսմ խմբաւորութեան, կամ վասն երկուց լուսաւորացոյ սակս ի միասին դրման, վասն որ՝ ի Քրիստոս ժողովելոյ: Եւ զարձեալ է տոմար արեգական և լուսնի ընթացք:

ՀՅ.— Եւ զի՞նչ է սկիզբն տոմարիս կամ ո՞վ գտլով աղբիւր շարժման:

ՊԽ.— Երեք ժամքն:

ՀՅ.— Եւ ուտի՞ գիտելով զայս:

ՊԽ.— Յարշաւանս միաւորեալ, ընթացիւք սահմանեալ. արեգակն կատարէ թոլոր մի երեք հարիւր վաթսուն և հինգ օր, իսկ լուսինն՝ երեք հարիւր յիսուն և չորս օր, ի պարփակութեան իւրեանց, յօր մտիցն ի նիսան առեալ ընթացից երեք ժամ. ապա աստանօր ի կէտ շրջանի իւրոյ // ելից զկէտ սահմանադրութեան շափոյ: Դարձեալ ի նպերտս ընթացիցն ընդ ոլոր(տս) մտեալ և հասեալ ի նոյն եռպատումն: Դարձեալ՝ պակասեալ գտեալ ըստ նախագիծ ժամանակին և ըստ նմին կրկնակ առեալ արեգակն ժամանեաց զինքն այսպէս. յեռն և ի քառն, զըզվանդակ օրն երկոտասանժամեայ ստորանստեալ նահանջ ընդհանրական յաւիտեանիս և ըստ այսմ շարադրեալ յառաջնակարգ խաղացմամբ արեգականն և ոչ օր վերժանեալ և դարձեալ պակասեալ:

ՀՅ.— Զի՞նչ է ամիս:

ՊԽ.— Տեսանելով առաջնոցն զլուսինն լցեալ և մաշեալ, իմացան զանցաւորութիւն կենաց իւրեանց և ասացին թէ՛ ի՛մ ես:

ՀՅ.— Զի՞նչ են ամիսք ազգաց կամ յումմէ՞ եղան անուանք ամսոց:

ՊԽ.— Ամսոց անուանք ի սկզբանէ ոչ էին, այլ սկսեալ յԱդամայ մինչև ի Մովսէս՝ զգարնանամուտն տարեմուտ առնէին ամենայն ազգք: Եւ ամսոց անուանք ոչ գոյր, բայց միայն զառաջին լուսին գարնանն լուսին անուանէին առաջին և զկնի՝ երկրորդ լուսին, և երրորդ, և չորրորդ, մինչև չերկոտասաներորդն: Եւ այսպիսի անուամբք վարէին զամիս ողջոյն մինչև ի մուտ գարնանային և այլ ի՛ յառաջինն դառնային: Իսկ անուանք երրայնցոց ամսոց ի Մովսէսէ օրինադրեցան, որ և կարգեաց զլրմունս գատկաց իւրեանց, որ էր օր ելիցն նոցա յձգիպտոսէ, նոյնպէս և զամենայն տօնս նոցա կարգեաց: Իսկ վասն այլազգեաց անուանց ամսոց, յայտնի ոչ գտաք թէ՛ յումմէ՞ օրինադրեցան՝ ի յիմաստասիրաց կամ ի թագաւորաց: Զի բազում ամիսք այն են, զոր թագաւորքն յիւրեանց // անուանան անուանէին, որպէս առաջին կայսրն Հռոմայ Գայիոս, որ կոչեցան Յուլիոս, սա ի թագաւորելն իւրում զտիլիոս ամիս յուլիս անուանեաց ի վերայ անուան իւրոյ և վասն ծննդեան իւրոյ ի նոյն ամիս: Սապէս և Օգոստոս երկրորդ կայսրն Հռոմայ զհեկիտոս ամիս օգոստոս ան-

97բ

98ա

ուանեաց ի վերայ անուան իւրոյ և վասն ծննդեանն իւրոյ ի նոյն ամիս: Սապէս և այլ ամիսք անուանեցան՝ յումմէ և իցէ, զոր աւելորդ համարիմ կարդաւ պատմել: Բայց զհայոցս ասացից: Հայոց ամսոցդ անուանք յառաջ էին քան զդնել թուականին հայոց: Եւ ոչ քան զայս միայն, այլ և յառաջ քան զմարդեղութիւն Բանին Աստուծոյ անուանեալ էին ամիսքդ այսոքիկ: Եւ պատճառն այս է. զի Հայկ ոմն անուն՝ աղեղնաւոր սկայազօր, ի յազգէ Աբեթի, որդոյ Նոյի, եկեալ ի Բաբելոնէ տիրացաւ հայոց և բնակեցաւ ի Հայք, և յանուն նորա վոչեցաւ Հայք: Նոյնպէս և [անուանք] որդոց իւրոց և դստերաց նորա եղին ի վերայ ամսոցդ՝ վասն մեծարանաց հօրն: Եւ են այսոքիկ. Նաւասարդ, և Հոռ, և Սահմ, և Մեհեկ, և Արեգ, և Մարեր՝ դստերք էին Հայկին, իսկ Տրէ, և Քաղոց, և Արաց, և Հրոտից՝ որդիք էին Հայկին: Իսկ մարգաց և հարուանց, զոր այժմ վոչեն ահկի, զայսոսիկ ի գործոյ առին զանուանս, վասն այսր կոչի Աբեթական տոմար:

ՀՅ.— Զի՞նչ է կրկնակը:

98բ

ՊԽ.— Աւելիք են, որ՝ քան զշաբաթն: Եւ նախ զի-ասէ // նաւասարդի չկայ և այս է պատճառն, վասն զի շաբաթն եօթն օր է, և ամիսն երեսուն օր. և յորժամ շաբաթք առնես, լինի չորս շաբաթ և երկու օր և այսպէս ի վերայ միմեանց բառնամք ըստ կարգի մինչև լինի շաբաթ և ապա ի նմին դառնայ: Այլ որ ասեն զհինգ օր աւելեացն լինելոյ պատճառ, չկալոյ նաւասարդոյ կրկնակ, այն չէ ճշմարիտ, զի աւելոք արարչութեան յաւել աւելոս երրայեցւոցն են և ոչ հայոց:

ՀՅ.— Զի՞նչ են կիսակը:

ՊԽ.— Կէս օր յամենայն ամսոյ ի վերայ միմեանց յաւելու ի մնացուածէ լուանին:

ՀՅ.— Զի՞նչ է թուականն:

ՊԽ.— Նիւթ թուոց, շարժումն յաւելտախաղաց և հիմն զանազան մասանց արուեստից: Արդ՝ վասն զի յարաց ամսոյ երեսուն հանդիպեցաւ դնել զիր թուականութեան հայոց ազգիս ի ձեռն Անանիայ Շիրակացոյ ի քսան և հինգ ամիսն Յուստինիանոսի վայտեր, ի հիմնարկութեան եկեղեցոյն սուրբ Սոփիայ և ի քսան և երկու ամիսն Խոսրովու պարսից արքային: Արդ՝ յայնմ ամի յորում զթուականն եղին, հինգ հազար ինն հարիւր եօթնասուն և վեց ամ էր յԱդամայ մինչև ի հայ թուականն, և ի ծննդեանէն Քրիստոսի մինչև ի սրբոյն Գրիգորի ելն ի վիրապէն ամք Կրկու հարիւր եօթնասուն և վեց և անտի մինչև ցհայ թվականն ամք երկու հարիւր եօթնասուն և վեց, որ լինի ի ծննդեանէն Քրիստոսի մինչև ցհայ թուականն ամք հինգ հարիւր յիսուն և երկու, և ըստ ոմանց՝ հինգ հարիւր յիսուն և մի:

ՀՅ.— Զի՞նչ է որ ասէ կալ թիւ մի յարաց:

89ա ՊԽ.— Զվերջին օր ամսոյն ասէ, զի յորժամ զթուականն եղին, յայտնութիւնն արաց երեսուն էր և առաջին ամ էր յետ նահանջի: Իսկ շորեք պատկելոյ պատճառն այն է, զի ի չորս ամիսն՝ օր մի // յառաջ խաղայ յայտնութիւնն:

ՀՅ.— Զի՞նչ է նահանջն:

ՊԽ.— Երեք ժամքն են, որ ի չորս ամն մի օր կատարի և կոչի նահանջ, այսինքն՝ որոշումն ժամանակաց:

ՀՅ.— Զի՞նչ է նահանջից նահանջ:

ՊԽ.— Ի քսան և ութ ամիսն եօթն օր լինի և շաբաթ կատարի և այն կոչի նահանջից նահանջ:

(Շարունակելի)